ՈՐՈՇՈՒՄ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

«10» 04 2018թ. ք. Մասիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի մարզային բաժնի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Արմեն Սամվելի Հովհաննիսյանս՝ ուսումնասիրելով 14.03.2018թ. հարուցված թիվ 03/02-04075869, 03/02-04075883, 03/02-04075898 և 03/02-04075892 կատարողական վարույթների նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

1.Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից <<25>> հունվար 2018թ. տրված թիվ ԱՎԴ2/0978/02/17 կատարողական թերթի համաձայն.

Պետք է՝ հրապարակային սակարկություններով վաճառել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 0264522 վկայականի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական 03-006-4-1 մատյանի 000136 համարի տակ գրանցված, 03-006-016-006 կադաստրային համարով 0.89 հա տնամերձ հողամասի, 016-006-001 կադաստրային համարով Արարատի մարզի Ազատաշեն 9-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող 127.60 քմ բնակելի տունը, շինությունները, տնամերձ հողամասը և վաճառքից առաջացած գումարը բաշխել ընդհանուր համատեղ սեփականության մասնակիցներ Խաչիկ Կարապետյանի, Սուսաննա Կարապետյանի, Մխիթար Կարապետյանի, Միքայել Կարապետյանի, Թելման Կարապետյանի միջև՝ յուրաքանչյուրին 1/5-րդ մասով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

Պարտապաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքը.

/	լոտի անվանումը, նկարագիրը	գնահատման գինը /դրամ/	մեկնարկային գինը /դրամ/	գույքի քանակը
1	**Արարատի մարզ գ. Ազատաշեն 9-րդ փողոց, 3-րդ տուն- Շինության մակերեսը՝ արտաքին մակերեսը՝ 127.6 քմ., ներքին մակերեսը՝ 103.3քմ., որից 1-ին հարկը՝ 79.0քմ., նկուղը՝ 24.3քմ.,** հարկայնությունը՝ 1 հարկանի՝ նկուղային հարկով, շենքի պատերը՝ քար է, միջհարկային ծածկը՝ երկաթ-բետոն, մուտքի դուռը և ներսի դռները՝ փայտյա է, պատուհանները՝ փայտյա է, հատակը՝ բետոնե երեսսվաղ, տախտակ և կերամիկական սալիկ, պատերը՝ ներկանյութ, խոհանոցի պատերը՝ մասամբ կերամիկական սալիկ, նկուղը՝ հարդարանքը բացակայում է, առաստաղի բարձրությունը՝ 1-ին հարկ՝ 2.9 մ., նկուղը՝ 1.9 մ., ունի ջուր, հոսանք, կոյուղի, գազ, **Հողամասում առկա էին շինություններ (սանհանգույց, լոգարան, խոհանոց, գոմ), որոնք արտացոլված չեն անշարժ գույքի սեփականության վկայականում և գնահատողի կողմից չեն ներառվել անշարժ գույքի շուկայական արժեքում:** Կառուցվել է 1990-ական թվականների սկզբին, հանդիսանում է ընդհանուր համատեղ սեփականություն, սեփականատերերն են Խաչիկ, Սուսաննա, Մխիթար, Միքայել և Թելման Մխիթարյանները: **Օժանդակ շինություններն են՝ հիմք՝ 87.1**	13.500.000	10.125.000	1 հատ